ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 213-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Վաշխառությունը» վերտառությամբ 213-րդ հոդվածի համաձայն վաշխառությունը պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալն է, ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելն է, որից օգտվել է մյուս կողմը:

Վաշխառության հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է երկու արարքով, որոնցից թեկուզև մեկի կատարումը բավական է արարքը հանցագործություն որակելու համար: Այն է. առաջին՝ պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը, և երկրորդ՝ անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ:

Հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման:

ՀՀ Սահմանադրական դատարանը, իր 05.04.2011թ. ՍԴՈ-947 որոշմամբ, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համախպատասխանության հարցին, արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի առկայության դեպքում գործարքի կողմ հանդիսացող մասնավոր անձին է հնարավորություն վերապահված ընտրություն կատարելու նշված արարքը կատարած, գործարքի մյուս կողմ հանդիսացող մասնավոր անձին քաղաքացիական պատասխանատվության ենթարկելու համար հայց կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար համապատասխան հայտարարություն ներկայացնելու միջև: Բոլոր դեպքերում, օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարք կնքած անձը

կարող է և պարտավոր է իմանալ, որ տվյալ արարքի համար սահմանված է ոչ միայն քաղաքացիական, այլ նաև քրեական պատասխանատվություն:

ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունները, այսինքն՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված վաշխառության վերաբերյալ գործերը համարվում են հանրային հետապնդման գործեր:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 05.04.2011թ. ՍԴՈ-947 որոշմամբ անդրադարձել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում՝ «ծանր կացություն» և 2-րդ կետում՝ «որը կատարվել է որպես արհեստ» բառակապակցությունների և դրանց բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը: ՀՀ Սահմանադրական դատարանը մասնավորապես նշել է, որ «ծանր կացություն» բառակապակցությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր կոնկրետ փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից: Գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս իրավիճակը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը, կոնկրետ դեպքում՝ փոխառուն, գտնվել է ծանր կացության մեջ: Ինչ վերաբերում է օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում՝ «որը կատարվել է որպես արհեստ» բառակապակցության վերաբերյալ դիմողի հարցադրմանը, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը բարձրացնում է իրավունքի կիրառման հարց:

Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի առկայության դեպքում գործարքի կողմ հանդիսացող մասնավոր անձին է հնարավորություն վերապահված ընտրություն կատարելու նշված արարքը կատարած, գործարքի մյուս կողմին քաղաքացիական պատասխանատվության ենթարկելու համար հայց կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար համապատասխան հայտարարություն ներկայացնելու միջև:

Մարինե Ֆարմանյան
ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ